

ՀՌԻՓՍԻՄԵ ՕՀԱՆՅԱՆ*

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարանի դասախոս*

hr.ohanyan@ysu.am

0009-0007-4783-0895 

DOI: 10.54503/1829-4073-2024.2.173-190

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ ՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Ամփոփում

Սույն հոդվածը քննության է առնում քաղաքավարության մի շարք դրույթներ՝ որպես բանավոր հաղորդակցության անքակտելի մաս, որը հատուկ է ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ քաղաքակիրթ ցանկացած ժողովրդի լեզվամտածողությանը: Քաղաքավարության մի շարք դրսևորումների քննությունը բանավոր խոսքում իրականացվել է վերջիններս դասակարգելով ըստ խմբերի, ինչպես օրինակ, ողջույնի և հրաժեշտի, ներողություն խնդրելու, խրախուսելու և գոտեպնդելու, հարցեր տալու և հարցադրումներ կատարելու և այլն: Քննության ընթացքում վեր են հանվել լեզվական միջոցների գործաբանական առանձնահատկությունները, ինչպես նաև հայ և օտար մշակույթներում դրանց տարբեր դրսևորումները: Այս հոդվածում ուսումնասիրվել են նաև քաղաքավարության բարձր աստիճանի դրսևորումները, պարտադրանքի նվազեցումը, անուղղակիությունը, հաղորդակցության մասնակիցների սոցիալական մեծ կամ փոքր տարբերությունը, տարիքի առանձնահատկությունները, խոսքի կառուցման ուղղակի դրսևորումները և այլն: Անշուշտ քննվել են նաև լեզվամտածողության, մշակույթի և համատեքստի դերն ու կարևորությունը հաղորդակցության պահին: Քննության արդյունքում բացահայտվել է, որ քաղաքավարությունը հանդիսանում է հաղորդակցության կարևորագույն բաղադրիչ: Իրականում գոյություն չունեն շատ կամ քիչ քաղաքավարի ժողովուրդներ: Յուրաքանչյուր ժողովուրդ յուրովի է քաղաքավարի: Սույն հոդվածում քննելով քաղաքավարության որոշ

* Հոդվածը ներկայացվել է 18.06.24, գրախոսվել է 21.06.24, ընդունվել է տպագրության 30.08.24:

Քաղաքավարության որոշ դրսևորումները բանավոր խոսքում...

դրսևորումներ՝ անդրադարձ է արվել նաև դրանց առանձնահատկություններին և կարևորությանը միջմշակութային հաղորդակցության շրջանակներում՝ զուգահեռաբար հենվելով այդ դրսևորումների հայերեն և իսպաներեն, ինչպես նաև տարբեր մշակույթներ բնորոշող օրինակների վրա: Մշակույթը բացահայտում է հաղորդակցության կողավորման, այն փոխանցելու և մեկնաբանելու ձևերը: Միջմշակութային հաղորդակցությունը իր տեղն է գտել այնպիսի սոցիալական գիտությունների շարքում, ինչպիսիք են մշակութային ուսումնասիրությունները, լեզվաբանությունը, հոգեբանությունը և հաղորդակցական հմտությունները:

Բանալի բառեր՝ քաղաքավարություն, հաղորդակցություն, լեզու, միջմշակութային հաղորդակցություն, քաղաքավարության ձևեր, հանրալեզվաբանություն, գործաբանություն:

Ներածություն

Քաղաքավարությունը մարդկանց հասարակական վարքի դրսևորումներից մեկն է և ավանդաբար համարվում է բարեկիրթ պահվածք: Գործաբանական լեզվաբանության և մասնավորապես հանրալեզվաբանության մեջ շրջանառվում են խոսքային ընթացակարգի էթիկետային նորմերին առնչվող խնդիրներ: Ուստի քաղաքավարության կարգը այսօր արդեն դարձել է լայն առումով քննության առարկա՝ որպես բարեկիրթ հաղորդակցվելու, զրույց վարելու արվեստի տիրապետում:

Սույն հոդվածի **արդիականությունը** նախևառաջ պայմանավորված է միջմշակութային հաղորդակցության ներկայիս բուռն զարգացմամբ, որտեղ բարեկիրթ հաղորդակցության գործընթացը ուղղակիորեն կարող է նշանակություն ունենալ հաղորդակցության արդյունքների և դրա հետևանքների համար: Այս վերլուծության արդիականությունը որոշվում է նաև այն իրողությամբ, որ քաղաքավարության միջոցները ծառայում են լեզվի հաղորդակցական ոլորտին և կապակցում են լեզվական և խոսքային մակարդակները: Լեզուն արտացոլում է քաղաքավարության կանոնները, հաղորդակցական կադապարներն ու ռազմավարությունները՝ խթանելով ներդաշնակ, արդյունավետ հաղորդակցական փոխներգործությունը: Այս առումով, առանցքային է ներիմաստի ուսումնասիրությունը, որի հիմքում հաղորդակցական իրադրությունն է: «Քաղաքավարություն» հասկացությունը համընդհանուր հաղորդակցական կարգ է, քանի որ դրա միջոցով է իրականացվում պատշաճ ու բարեկիրթ մարդկային հաղորդակցական փոխազդեցությունը՝ հաղորդակցման

Օհանյան Հ.

նորմերի և հաղորդակցական ռազմավարությունների միջոցով: Առանց լեզվի հնարավոր չէ իրականացնել խոսքային հաղորդակցություն: Հետազոտության **նորույթն** այն է, որ առաջին անգամ վերլուծական համեմատական հետազոտությամբ փորձ է արվում քննության առնել և վերլուծել քաղաքավարության խոսքային որոշ դրսևորումների կարևորությունը հաղորդակցության, միջմշակության ինտերակցության մեջ:

Սույն հոդվածի **նպատակն է** բացահայտել քաղաքավարության որոշ տեսակներ՝ դրանց դրսևորումները բանավոր խոսքում, ինչպես նաև քաղաքավարության և հաղորդակցության համատեղ կառուցման առանձնահատկությունները:

Հոդվածում առաջադրված խնդիրների լուծման նպատակով կիրառվել են վերլուծության տարբեր՝ նկարագրական, զուգահեռական վերլուծության, ճանաչողության և համատեքստային **մեթոդներ**: Այս մեթոդները թույլ են տալիս հաղորդակցական տարբեր իրադրություններում ընդգրկված քաղաքավարության տեսակների, բարեկիրթ հաղորդակցության կառուցումը՝ հաղորդակցական տարբեր իրադրություններում:

«Քաղաքավարություն» հասկացության խնդիրն ուսումնասիրող շատ հետազոտողներ հստակ տարբերակում են քաղաքավարի և անքաղաքավարի ժողովուրդներին: Իրականում գոյություն չունեն շատ կամ քիչ քաղաքավարի ժողովուրդներ: Յուրաքանչյուր ժողովուրդ յուրովի է քաղաքավարի: Սույն հոդվածում քննելով քաղաքավարության որոշ դրսևորումներ՝ անդրադարձ է արվում նաև դրանց առանձնահատկություններին և կարևորությանը միջմշակության ինտերակցության շրջանակներում՝ զուգահեռաբար հենվելով այդ դրսևորումների իսպաներեն օրինակների վրա: Մշակույթը բացահայտում է հաղորդակցության կողավորման, այն փոխանցելու և մեկնաբանելու ձևերը: Որպես առանձին հասկացություն՝ այն ուսումնասիրում է տարբեր մտածելակերպի տեր անձանց շփման դեպքերը: Վերջինս ներառում է լեզուների, մշակույթների, սովորույթների ընկալումը: Միջմշակության ինտերակցությունը իր տեղն է գտել այնպիսի սոցիալական գիտությունների շարքում, ինչպիսիք են մշակության ուսումնասիրությունները, լեզվաբանությունը, հոգեբանությունը և հաղորդակցական հմտությունները:

Արդյունքներ և քննարկում

Հաղորդակցությունը մարդու բնածին կարիքներից մեկն է, իսկ լեզուն՝ հաղորդակցության կարևորագույն միջոցը: Այն թույլ է տալիս մեզ ճանաչել

Քաղաքավարության որոշ դրսևորումները բանավոր խոսքում...

շրջակա միջավայրը, ձևավորել մեր մտքերը, արտահայտել մեր հույզերն ու գաղափարները, հասկանալ մյուսներին: Հաղորդակցության ընթացքում մարդիկ հաղորդում և ընկալում են որոշակի տեղեկատվություն, փոխանակում են մտքեր, հույզեր, մղում գործողության և այլն: Ըստ այդմ էլ առանձնացվում են հաղորդակցության հետևյալ գործառույթները (իրազեկման գործառույթ, ինտերակտիվ գործառույթ, ըմբռնման գործառույթ):¹ Հաղորդակցության կարևորագույն գործոններն են անհատականությունը, տարաբնույթ հարաբերությունները, համատեքստը, ազգային պատկանելությունը և այլն: Հաղորդակցությունը ներառում է հաղորդակցական գործողությունների տարբեր ձևեր, որոնք խոսքի միջոցով՝ որպես տեղեկատվություն ուղարկելու միջոց, կարող են լինել գրավոր հաղորդագրությունների կամ ժեստերի միջոցով և այլն: Այս բազմազան ձևերը, թեև տարբեր են, սակայն ունեն ընդհանուր հատկանիշներ:² Այդուհանդերձ բոլոր ձևերն էլ ներառում են էթիկայի և քաղաքավարության նորմերը, որոնք էլ հաղորդակցության ակտի իրականացման կարևորագույն տարրերն են և նպաստում են թյուրիմացություններից, սխալ ընկալումներից և անքաղաքավարությունից խուսափելուն: Հարկ է նշել նաև, որ այս հարաբերություններում շատ մեծ է նաև մի շարք սոցիալական գործոնների դերը՝ տարիքը, սեռը, գիտելիքների իմացության աստիճանը հաղորդակցության համատեքստի շրջանակներում, սոցիալական կարգավիճակը և այլն:³ Ինչպես հայտնի է սոցիալական դերը որոշվում է հասարակության մեջ մարդու զբաղեցրած դիրքով (ուսանող, աշխատող, թոշակառու, մայր, հայր, պաշտոն և այլն) և ենթադրում է զբաղեցրած դիրքի և գործառույթի համակցություն, մինչդեռ մարդկանց մտքում այս կամ այն դերը կապված է վարքագծի ձևի հետ՝ իր զբաղեցրած սոցիալական դերին համապատասխան իրավունքներով և պարտավորություններով:⁴ Այս նորմերի բացակայությունը հանգեցնում է հաղորդակցական կոնֆլիկտի՝ բախման: Լեզվաբանության մեջ քաղաքավարությունը հասկացվում է որպես խոսակցական ռազմավարությունների մի համակարգ, որը նախատեսված է խուսափելու կամ մեղմելու լարվածությունը, որն առաջանում է, երբ խոսողը հանդիպում է իր և խոսակցի նպատակների միջև ստեղծված կոնֆլիկտին: Ջ. Լիչը նույնպես քաղաքավա-

¹ Նազարյան 2001, 9–10:

² Santos 2012, 32–56:

³ Arroyo 2004, 210–217:

⁴ Формановская 1989, 31.

րությունը ներկայացնում է որպես վարքագծի դրսևորման տարբեր ձևերի ամբողջություն, որի նպատակն է ստեղծել և պահպանել ներդաշնակ հաղորդակցական փոխհարաբերություններ:⁵ Մի շարք լեզվաբաններ էլ պնդում են, որ քաղաքավարի խոսելաձևի դրսևորումը կոնֆլիկտից և աններդաշնակությունից խուսափելու նպատակով գրուցակիցների միջև լուռ համաձայնության արդյունք է:⁶ Քաղաքավարությունը սոցիալական նորմերի մի համակարգ է՝ հաստատված յուրաքանչյուր հասարակության կողմից, որը կարգավորում է իր անդամների պատշաճ վարքը՝ արգելելով նրանց վարքագծի որոշ ձևեր: Բացի այդ, քաղաքավարությունը նաև իրադրություն է, որի դեպքում այն, ինչը համապատասխանում է հաստատված նորմերին, համարվում է քաղաքավարի, իսկ այն ինչը չի համապատասխանում՝ քաղաքավարի չէ և մերժվում է: Քանի որ քաղաքավարության նորմերը ստեղծվում են որևէ հասարակության ներսում և հանդիսանում են ներքին նորմեր, հնարավոր է, որ մի հասարակության մեջ առկա քաղաքավարության նորմը մեկ այլ հասարակության մեջ անքաղաքավարության նորմ լինի:⁷

Օրինակ՝ արևմուտքում, ինչպես հայտնի է, սովորաբար գրադարանավարուհուն շնորհակալություն են հայտնում ուսանողները նրան գիրքը վերադարձնելիս, մինչդեռ արևելքում ընդունված չէ շնորհակալություն հայտնել դիմացինին, երբ նա իր պարտականություններն է կատարում: Արևելյան մշակույթում շնորհակալություն հայտնում են, երբ իսկապես դիմացինը իրական շնորհ է անում:

Այսպիսով շատ կարևոր է, մասնավորապես միջմշակութային հաղորդակցության պահին իմանալ խոսակցի մշակույթի առանձնահատկությունները: Ուստի, կարելի է ասել, որ մեկ լեզվի քաղաքավարության նորմերը ոչ միայն այդ լեզուն կրող հասարակության լեզվի նորմեր են, այլև մշակույթի նորմեր են: Այդուհանդերձ, թեև յուրաքանչյուր լեզու ունի իր լեզվաբանական առանձնահատկությունները, իսկ մշակույթը՝ իրեն բնորոշ ավանդույթները, քաղաքավարությունը բնորոշ է բոլոր ժողովուրդներին և համարվում է համընդհանուր:⁸ Հետևաբար անհրաժեշտ է տարբերակել, թե որն է լեզվի գործառույթը, ինչ կարող է արտահայտել լեզուն, ինչ է սովորաբար ասում և ինչ է

⁵ Leech 1983, 104.

⁶ Bekaryan, Paronyan 2001, 106–116.

⁷ Escandell 2008, 142.

⁸ Coseriu 1999, 81.

Քաղաքավարության որոշ դրսևորումները բանավոր խոսքում...

ասելու: Յուրաքանչյուր լեզու արտահայտում է որոշակի արժեքներ, և այդ արժեքներից մեկը քաղաքավարությունն է:

Քաղաքավարության և լեզվական ձևերի փոխհարաբերության մեջ առավել ցայտուն տեսանկյուններից մեկն այն է, ինչը վերաբերում է դիմելաձևերին կամ սոցիալական ցուցայնությանը: Դիմելաձևերի կիրառությունը հասարակության կողմից ընդունված լեզվական արտահայտությունն է: Սոցիալական ցուցայնությունը արտահայտություն է, որը վերաբերում է հաղորդակցության ակտի մասնակիցներին: Այն կարող է ունենալ տարբերակիչ գործառույթ սոցիալական հարաբերություններում, ինչպես օրինակ՝ քաղաքավարի «Դուք» դիմելաձևը ի տարբերություն «դու» արտահայտության: Սակայն ուշագրավ է այն, որ տարբեր լեզուներում, ինչպես և տարբեր մշակույթներում դրանք ունեն տարբեր դրսևորումներ:

Օրինակ՝ հայերենի քաղաքավարի «Դուք» -ի դիմաց իսպաներենն ունի «Usted» և հոգնակիում «Ustedes» ձևերը, իսկ հայերենի «դու»-ի դիմաց իսպաներենն ունի «tú» և հոգնակիում «vosotros» ձևերը:

Կարելի է եզրակացնել, որ քաղաքավարության դիմելաձևերի կիրառությունը պայմանավորված չէ լեզվի կառուցվածքով, այլ տվյալ լեզուն կրող հասարակության մշակույթով: Հետևաբար եթե մի մշակույթի կրողն իրազեկ չէ մյուս մշակույթին, ապա հաղորդակցական սխալներն անխուսափելի են:

Լեզուն, որպես քաղաքավարությունը խթանելու հիմնարար ռեսուրսներից մեկը, սոցիալական հաղորդակցության հիմնական մեխանիզմն է, ինչպես օրինակ՝ հայ հասարակության մեջ «դու»-ի կամ «Դուք»-ի նկատմամբ վերաբերմունքը, որն էլ հավասար է իսպաներենի «tú» և «Ud, Uds» դիմելաձևերին: Այս դիմելաձևերի կիրառությունն էլ իր հերթին անմիջականորեն սահմանվում է հասարակական դիրքի, տարիքի, ավանդույթների և մի շարք այլ գործոնների շրջանակում: Ուստի զարմանալի չէ, որ լեզվաբանությունն այն ոլորտն է, որտեղ կենտրոնացել են հաղորդակցության մեջ քաղաքավարության ուսումնասիրության հիմնական գիտական ներդրումները: Ինչպես արդեն նշվեց վերևում, յուրաքանչյուր ոք պետք է վերաբերվի մյուսին համապատասխան իր տարիքի, հասարակության մեջ իր զբաղեցրած դիրքի, և այս ամենը չի կարող փոխվել, քանի դեռ հասարակական որևէ անկանխատեսելի փոփոխություններ տեղի չեն ունեցել: Քաղաքավարության դիմելաձևերի կիրառությունը ընդունված է հասարակության կողմից, սակայն այս կամ այն լեզվակիր հասարակության մեջ հնարավոր են մի շարք խոսքային միավորներով պայ-

մանավորված լեզվական տարբերություններ՝ ելնելով տվյալ ժողովրդի ավանդույթներից և մշակույթից:

Ինչպես հայտնի է, հաղորդակցության պահին խոսողը (el emisor) պետք է հաշվի առնի այն, որ իր խոսքը (mensaje) ոչ միայն իր մտքերին և նպատակին պետք է համապատասխանի, այլ նաև խոսակցի (receptor) հասարակական դերին և տեղին:⁹ Ուստի, մեծ է լեզվական միջոցների հստակ կիրառության դերը կանոնավոր հարաբերություններ կառուցելու համար: Այս առումով քաղաքավարությունը կարող է ընկալվել որպես գրույց վարելու ռազմավարություն, որի նպատակն է խուսափել հնարավոր կոնֆլիկտներից: Ինչպես նշում է Ստերնինը, բանավոր խոսքի էթիկետը իրենից ներկայացնում է մարդկանց խոսքային վարքագծի կանոնների համակցություն, որը որոշվում է հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերություններով և արտացոլում մարդկանց միջև բարեկիրթ հարաբերությունները:¹⁰

Ըստ Գրայսի, կան տարբեր դրույթներ՝ բնույթով էսթետիկական, սոցիալական կամ բարոյական (օրինակ՝ «Եղի՛ր քաղաքավարի»), որոնք հաճախ նկատվում են հաղորդակցության մասնակիցների կողմից և կարող են իրենց հետ բերել ոչ ավանդական ենթատեքստ (implicatura): Այնուամենայնիվ, հաղորդակցական դրույթները և դրանց հետ կապված խոսակցական ենթատեքստերը կապված են որոշակի նպատակների հետ: Ըստ Գրայսի դրույթների, այդ նպատակը տեղեկատվության առավել արդյունավետ փոխանակումն է: Այս հստակեցումը, իհարկե, չափազանց նեղ է և պետք է ընդհանրացվի, բերվի այնպիսի ընդհանուր նպատակների, ինչպիսիք են ուրիշների գործողությունների վրա ազդելը կամ դրանք ուղղորդելը:¹¹ Այս և մի շարք այլ մոտեցումների համաձայն, քաղաքավարությունը չի դիտարկվում խոսողի տեսանկյունից, որպես էգոյի ցանկություններն ընդգծող և բարձրաձայնող միջոց: Որոշ հետազոտություններում ընդունված է այն տեսակետը, որ քաղաքավարության միջոցով վեր են հանվում և առաջ մղվում ոչ միայն գրուցակցի (այսինքն՝ խոսքի հասցեատիրոջ), այլև խոսողի ցանկությունները և դիրքորոշումները: Մասնավորապես հաճախ ընդգծվում է այն միտքը, որ խոսողի կողմից ցուցաբերվող քաղաքավարությունը զուտ գրուցակցի հանրային վարկը պահպանելու մտահոգության արդյունք դիտելը այնքան էլ արդարացված չէ, քանի որ քաղաքավարության դրսևորման իրական և հիմնական շարժառիթը

⁹ Santos 2012, 11–17.

¹⁰ Стернин 1996, 4.

¹¹ Grice 1975, 47.

Քաղաքավարության որոշ դրսևորումները բանավոր խոսքում...

հենց խոսողի սեփական, ինչպես նաև շարունակական բարեկեցության ապահովումն ու երաշխավորումն է: Վերոգրյալից ելնելով՝ հարկ է նշել, որ հաղորդակցական փոխըմբռնման առանցքային սկզբունքներից մեկն է նաև պարզությունը, որը համարվում է հաղորդակցության մեջ քաղաքավարության հենասյուներից մեկը, քանի որ ցանկացած հաղորդակցություն՝ մտքի փոխանակում, մի նպատակ ունի, այն է՝ հասկանալի լինել խոսակցի համար, որն էլ, իր հերթին, քաղաքավարության նշան է և թույլ է տալիս արագ և հասկանալի կերպով ինֆորմացիան հասցնել զրուցակիցներին: Լակոֆն առաջարկում է երկու հիմնական կանոն՝ եղիր պարզ և եղիր քաղաքավարի:¹² Ըստ Լակոֆի, քաղաքավարությունը սահմանվում է հետևյալ երեք հենասյուներով.

- խուսափել զրուցակիցներին սեփական անձը պարտադրելուց, *(այս հարկանիշը նկատվում է, առաջին հերթին, այն դեպքերում, երբ զրուցակիցներից մեկը մյուսի նկատմամբ գերազանցության (սոցիալական, մասնագիտական...) իրավիճակում է,*

- թույլ տալ հաղորդակցական ակտի յուրաքանչյուր մասնակցի ընտրել իր զրուցակցին, առաջարկել տարբերակներ և ունենալ իր գործողությունների շրջանակն այն իրավիճակներում, որտեղ բացակայում է ծանոթությունը կամ վստահությունը, *(այս դեպքում խորհուրդ է տրվում առաջարկել մերժումից խուսափելու տարբերակներ),*

- վարվել այնպես, ասես երկու զրուցակիցներն էլ հիերարխիկորեն հավասար են՝ դրանով իսկ հեշտացնելով խոսակցի հարմարավետությունը և ամրապնդելով նրա հետ բնականոն կապը *(այս իրավիճակը վերաբերում է այն հաղորդակցությանը, որում զրուցակիցները լավ հարաբերություններ ունեն: Այսպիսով, նպատակը հարաբերություններն ամրապնդելն է՝ մրահոգություն և հետաքրքրություն ցուցաբերող մեխանիզմների միջոցով):*

Այուս կողմից, այս պարզությունը սկզբունքների, հաղորդակցական ակտի ժամանակ կարող է կամավոր խախտվել՝ այլ հաղորդակցական արդյունքների հասնելու նպատակով, օրինակ՝ սեփական ես-ը՝ էգոն խթանելը, կամ անձնական շահը և այլն: Ընդհանուր առմամբ քաղաքավարի լեզվի օգտագործումը բնութագրելու համար կարելի է դիմել այնպիսի արտահայտությունների, ինչպիսիք են՝ «լեզուն, որն օգտագործում է մարդը՝ չափազանց անմիջական լինելուց խուսափելու համար», կամ «լեզու, որը հարգանք է դրսևորում

¹² Lakoff 1973, 292–305.

Օհանյան Հ.

ուրիշների նկատմամբ կամ ուշադրություն է դարձնում նրա հանդեպ», կամ այլ օրինակներ, ինչպիսիք են «լեզուն, որը պարունակում է հարգալից հասցեական ձևեր օրինակ՝ պարոն կամ տիկին», «լեզու, որը ցուցադրում է որոշակի «քաղաքավարի» ձևակերպված արտահայտություններ, օրինակ՝ «խնդրում եմ, շնորհակալություն, ներեցե՛ք ինձ»: Եվ նորից կլինեն մարդիկ, որոնք լեզվի քաղաքավարի օգտագործումը համարում են «կեղծավոր», «անազնիվ», «հեռավոր», «անզգա» և այլն:

Ահա որոշ բառեր և արտահայտություններ, որոնք օգնում են քաղաքավարի լինել բանավոր հաղորդակցության մեջ թե՛ իսպաներենում և թե՛ հայերենում:

Օր.՝ Հրավերի մերժում/անհամաձայնություն /համաձայնություն

▪ *Ես կցանկանայի..., բայց...* / *Me gustaría..., pero...*

▪ *Ցավում եմ, բայց...* / *Lo siento mucho, pero....*

Անհամաձայնություն

▪ *Անհասկանալի է, որ...* / *Es incomprensible que...*

▪ *Այո, դա ճիշտ է, սակայն...* / *Es verdad/ Me parece inaceptable, pero...*

▪ *Անտրամաբանական է (Իմ կարծիքով անտրամաբանական), որ.../*

Es ilógico/No me parece lógico que...

▪ *Լավ չէ, որ...* / *Es malo que...*

Ուրիշների կարծիքների, իրավիճակների կամ վարքագծի հետ անհամաձայնությունը, որը համարվում է ոչ պատշաճ, միշտ պետք է ձևակերպել հարգալից ձևով, ինչպես նշված օրինակներում: Նման անհամաձայնությունները չպետք է իռացիոնալ արձագանքներ ստանան, այլ պետք է նշվեն այն համոզիչ պատճառները և փաստարկները, որոնք հիմք են մերժման համար՝ բառերի լավ օգտագործման միջոցով, ինչպես նշվում է օրինակներում:

Համաձայնություն

▪ *Կիսում եմ Ձեր կարծիքը* / *Estoy de acuerdo con....*

▪ *Արդարացի է, որ...* / *Es justo que...*

▪ *Բնականաբար...* / *Es natural que...*

Նշված արտահայտությունները կիրառվում են, երբ խոսակիցը իր համաձայնությունն է արտահայտում խոսողի կարծիքի հետ:

Հարցեր տալու և հարցումներ կատարելու եղանակներ

▪ *Ներեցե՛ք ընդհատելու համար, չէիք ասի* / *Perdón por interrumpirle, podría decirme....*

Քաղաքավարության որոշ դրսևորումները բանավոր խոսքում...

Ներեցե՞ք – Կախված ձայնի տոնայնությունից՝ հնչերանգից, այն կարող է արտահայտել ցնցում մարդու ասածից, կամ գուցե այն, որ դուր չի եկել ասածի ենթատեքստը, զարմանք:

Ահա որոշ օրինակներ, երբ քաղաքավարությունն արտահայտվում է **հարցերով և քաղաքավարի խոսքերով**.

- *Ես դեմ չեի լինի (No me importaría nada...)*- օգտագործվում է քաղաքավարի ինչ-որ բան խնդրելու համար,

- *Ես ձեր /տրամադրության տակ եմ (Estoy a su disposición) սովորաբար* ասվում է, որպեսզի արտահայտվի խոսողի պատրաստակամությունը՝ ինչ-որ բան անելու հաղորդակցի համար),

- *Ես/մենք շնորհակալ կլինենք, եթե..(nosotros estaríamos agradecidos si...)*. օգտագործվում է ինչ-որ մեկին պաշտոնապես և քաղաքավարի կերպով ինչ-որ բան խնդրելու համար:

Ինչպես **ներողություն** խնդրել

- *Ներողություն ընդհատելու համար / Perdón por interrumpirle*

- *Ներեցեք. կարո՞ղ եք ինձ ասել ժամը / Dícupla/Disculpe, podría dextrme qué hora es*

- *Ցավում եմ պատահածի համար / Siento lo ocurrido*

- *Սխալվեցի, ինձ ներիր / Me equivoqué y te pido perdón por ello*

Ներողություն խնդրելը նշանակում է ընդունել, երբ սխալ ենք թույլ տվել կամ վիրավորել ինչ-որ մեկին և պատասխանատվություն կրել մեր արարքների համար: Մյուս կողմից, ներելը ներառում է վրդովմունքի և վիրավորանքի զգացումներից ազատվելը մեկի հանդեպ, ով վիրավորել է մեզ: Ներողություն խնդրելը ոչ միայն սխալի ընդունումն է, այլև այդ սխալի պատասխանատվությունը: Ցույց տվեք անկեղծ ափսոսանք և արեք հնարավոր ամեն ինչ՝ իրավիճակը բարելավելու համար: Երբ մենք ներողություն ենք խնդրում, դա կարող է պարզեցնել և ամրապնդել մեր հարաբերությունները:

Ինչպես արտահայտել շնորհակալություն, երախտիք

- *Շատ շնորհակալություն / Muchas gracias, Agradezco mucho,*

- *Կապարյալ է / Es perfecto*

- *Դուք իսկապես չափազանց բարի եք / Realmente, Ud es muy amable*

Այս ձևերը կիրառվում են երախտագիտություն արտահայտելիս և գործածվում են, եթե «շնորհակալություն»-ը չափազանց քիչ է թվում՝ «Շնորհակալությունը» բավարար չէ: Ես իսկապես գնահատում եմ սա / այն, ինչ դուք արել

Օհանյան Հ.

եք: Ես չեմ կարող ձեզ լիարժեք շնորհակալություն հայտնել: Երբեմն մենք պետք է քաղաքավարի կերպով «ոչ» ասենք. «Ոչ, շնորհակալ եմ. Ոչ, շնորհակալություն. Ամեն դեպքում շնորհակալ եմ. Շնորհակալություն, բայց ինձ չի հետաքրքրում: Այսօր չէ, շնորհակալություն»: Կարելի է նաև լսել, որ մարդիկ ասում են. «Շատ շնորհակալ եմ, բայց պետք չէ անհանգստանալ»:

Քաղաքավարի արտահայտություններ, որոնք մարդիկ հաճախ օգտագործում են նախքան ինչ-որ բան ասելը խոսակցին **գոտեպնդելու** նպատակով:

- Մի անհանգստացեք ինձ համար / No se preocupe por mi
- Ինչպե՞ս կարող եմ օգնել Ձեզ / ¿En qué puedo ayudarle?
- Դու, ինչպես միշտ լավատես ես / Tú siempre igual de optimista.

Ողջույնի և հրաժեշտի ձևեր

- Ողջույն / Hola, Buenas
- Ողջույններ փոխանցեք X-ին / Mis saludos a X
- Հաճելի էր հանդիպել ձեզ / Ha sido un placer encontrarle
- Բարի երեկո / Buenas tardes
- Բարի գիշեր / Buenas noches
- Կրեսնվենք վաղը / Nos veremos mañana
- Ցրեսություն / Hasta la vista
- Մինչ հանդիպում / Hasta luego

Ըստ Լիչի՝ կա քաղաքավարության սկզբունք՝ խոսակցական դրույթներով, որոնք նման են Գրայսի ձևակերպածներին: Նա թվարկում է վեց դրույթներ՝ տակտ, առատաձեռնություն, հավանություն, համեստություն, համաձայնություն և համակրանք: Առաջինն ու երկրորդը զույգ են կազմում, ինչպես երրորդն ու չորրորդը: Այս դրույթները տարբեր են մշակույթից մշակույթ. այն, ինչ կարելի է քաղաքավարի համարել մի մշակույթում, կարող է տարօրինակ կամ ուղղակի կոպիտ լինել մեկ այլ մշակույթում:

Տակտի դրույթ: Տակտի դրույթում ասվում է. նվազագույնի հասցնել համոզմունքների արտահայտությունը, որը նեղություն է ենթադրում մյուսների համար, և առավելագույնի հասցնել այն համոզմունքների արտահայտությունները, որոնք օգուտ են բերում ուրիշներին:

- Կարո՞ղ եմ ձեզ մի վայրկյան ընդհատել....
- Եթե ես կարողանայի պարզաբանել սա, ապա ...

Առատաձեռնության դրույթ: Առատաձեռնության դրույթում ասվում է. առավելագույնի հասցնել համոզմունքների արտահայտությունը: Ի տարբե-

Քաղաքավարության որոշ դրսևորումները բանավոր խոսքում...

րությոյն տակտային դրոյթի՝ առատաձեռնության դրոյթը կենտրոնանում է խոսողի վրա և ենթադրում է, որ ուրիշներին պետք է առաջին տեղում դնել սեփական անձի փոխարեն:

▪ *Դու հանգստացիր և թոյլ տուր, որ ես ամանները լվանամ: Դուք պետք է գաք և մեզ հետ ընթերցեք:*

Հաստատման դրոյթ: «Հաստատման դրոյթը» ենթադրում է. առավելագոյնի հասցնել համոզմունքների դրսևորումը, որն արտահայտում է ուրիշների հավանությունը, և նվազագոյնի հասցնել այն համոզմունքների դրսևորումը, որն արտահայտում է մյուսների արհամարհանքը»: Նախընտրելի է գովաբանել ուրիշներին, իսկ եթե դա անհնար է, ապա շրջանցել հարցը, ինչ-որ նվազագոյն պատասխան տալ կամ լռել: Դրոյթի առաջին մասը խուսափում է տարաձայնություններից, իսկ երկրորդ մասը նպատակ ունի ստիպել այլ մարդկանց լավ զգալ՝ դրսևորելով համերաշխություն:

▪ *Գեղե՛տն, ես գիտեմ, որ դու հանճար ես, կիմանա՞ս, թե ինչպես կլուծվի այս մաթեմատիկական խնդիրը:*

Համեստության դրոյթ: Համեստության դրոյթը նշանակում է նվազագոյնի հասցնել գովասանքը կամ առավելագոյնի հասցնել սեփական արհամարհանքը: Համեստության դրոյթը ենթադրում է. առավելագոյնի հասցնել սեփական արհամարհանքի արտահայտությունը:

▪ *Օ՛, ես այնքան հիմար եմ, ես չեմ հիշել մեր դասախոսությունը:*

Դուք հիշե՛լ եք:

Համաձայնագրի դրոյթ: Համաձայնագրի դրոյթը շրջանառվում է հետևյալ կերպ. առավելագոյնի հասցնել սեփական և ուրիշների միջև համաձայնության արտահայտությունը:

▪ – *Ես չեմ ուզում, որ իմ աղջիկը սա անի, ուզում եմ, որ նա այլ բան անի:*

– *Այո, բայց տիկին, ես կարծում էի, որ մենք լուծել ենք այս խնդիրը արդեն ձեր վերջին այցելության ժամանակ:*

Համակրանքի դրոյթ: Համակրանքի դրոյթը նկատի ունի. առավելագոյնի հասցնել համակրանքը սեփական անձի և ուրիշների միջև: Սա ներառում է խոսքի, գործողությունների մի փոքր խումբ, ինչպիսիք են շնորհավորանքը, համակրանքը և ցավակցություն հայտնելը, որոնք բոլորը համապատասխանում են դրական քաղաքավարության ռազմավարությանը, որը վերաբերում է լսողի շահերին, ցանկություններին և կարիքներին:

▪ *Ցավում եմ, որ լսում եմ քո հոր մասին:*

Օհանյան Հ.

Այնուամենայնիվ, ոչ խոսում արարքները պետք է բավարարեն նաև քաղաքավարության հետ կապված սոցիալական նպատակները, և այս երկրորդ պարագան դեռևս բավարար վերաբերմունք չի ստացել: Անուղղակի խոսքի ակտերը պարադիգմատիկ օրինակներ են, և բանախոսները հաճախ օգտագործում են դրանք, երբ ուղղակի ձևերը կարող են անքաղաքավարի թվալ: Անուղղակի խոսքի ակտերը բացատրվել են հիմնավոր վարքագծով և կապված են նախատեսված խոսքի ակտերի համատեքստի հետ: Այնուամենայնիվ, դեռևս չկա պաշտոնական բացատրություն, թե ինչպես են անուղղակի արտահայտությունները նպաստում քաղաքավարությանը, և որ չափանիշներն են ազդում երկխոսության տարբեր իրավիճակների վրա: Մարդիկ սովորաբար գտնվում են իրենց սեփական նպատակներին հասնելու ցանկության և իրենց գործընկերների անունը, համբավը ունահարելուց խուսափելու ցանկության միջև: Այսպիսով, խոսողները սովորաբար փորձում են պլանավորել իրենց գործողությունները այնպես, որ շտկեն իրենց գործընկերների ցանկությունները: Մասնավորապես, պայմանական անուղղակի խոսքի ակտերի դեպքում համապատասխան փոխհատուցումը կենտրոնանում է հենց պարտադրանքի վրա.

■ *Կարո՞ղ եք ինձ գրիչ տալ: Հեղ փուր ինձ գրիչը:*

Ինչ վերաբերում է միջմշակութային հաղորդակցությանը՝ հարկ է նշել, որ յուրաքանչյուր մարդ ծնվում է մի համայնքում, որտեղ հաղորդակցվում է, սկսում է ճանաչել շրջապատը, մտածել, զգալ և գործել՝ դառնալով տվյալ համայնքի լեզվի և մշակույթի կրողը:

Առհասարակ «մշակույթ» հասկացությունը գործածվում է և նեղ, և լայն իմաստներով: Լայն առումով գործածվելիս այն ընդգրկում է մարդու հոգևոր զարգացման ամեն մի դրսևորում: Ամեն մի էթնիկ հանրության համար մայրենի լեզուն ոչ միայն հաղորդակցության միջոց է, այլ նաև մշակույթի և ընդհանրապես ազգային ինքնագիտակցության զարգացման ձև:¹³ Միջմշակութային հաղորդակցության կոնտեքստից դուրս լեզուն հաղորդակցության ձև չի հանդիսանում: Ամբողջ հաղորդակցությունը տեղի է ունենում որոշակի հանգամանքների շրջանակներում, որոնք փոփոխում են գործընթացի հաղորդակցական բնութագիրը. օրինակ՝ եթե միջմշակութային հաղորդակցությունը կատարվում է զրուցակիցներից մեկի մայրենի լեզուն օգտագործելով, ապա նա իրեն շատ ավելի հարմարավետ է զգում, քան մյուսը: Սա խոսում է այն մասին, որ միշտ

¹³ **Բաղդասարյան** 2023, 149:

Քաղաքավարության որոշ դրսևորումները բանավոր խոսքում...

չէ, որ զրուցակիցները հավասար դիրքերում են: Այս առումով միջմշակութային հաղորդակցություն սկսելուց առաջ հարկ է ստեղծել մշակութային փոխանակման հիմքեր: Միջմշակութային երկխոսությունը պետք է իրականացվի առավել հավասարության սահմաններում: Խոսքը վերաբերում է դրանք ճանաչելու և վերահավասարակշռելու փորձին՝ հնարավորինս խուսափելով հաղորդակցական սխալներից՝ բախումներից:

Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ հաղորդակցության մեջ քաղաքավարության կանոնները կարող են կախված լինել ազգամշակութային բաղադրիչից և լեզվի մեջ դրա համապատասխան դրսևորումներից՝ հատկապես խոսքային հաղորդակցության ժամանակ, որի մասին են վկայում բերված օրինակները, բայց և այնպես կան հաղորդակցական դրույթներ, որոնք, կարելի է ասել, նույնն են անկախ մշակույթից, սակայն լեզվի մեջ դրանց դրսևորումները տարբեր են:

Եզրակացություններ

Այսպիսով հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ

- քաղաքավարությունը հասարակական վարքագծի նորմերի ամբողջություն է, որը մշակվել է միջանձնյա հաղորդակցման ժամանակ ի հայտ եկող հակասությունները նվազեցնելու և մեղմելու նպատակով: Ուստի քաղաքավարությունը հանդիսանում է հաղորդակցության, հատկապես միջմշակութային հաղորդակցության կարևորագույն բաղադրիչներից մեկը:

- Քաղաքավարությանը նվիրված հանրալեզվաբանական և լեզվագործաբանական ուսումնասիրություններում սույն երևույթը մեկնաբանելու տարբեր մոտեցումներ են կիրառվում: Սակայն առաջնային է դիտվում քաղաքավարության «այլասիրական» հայեցակերպը, և այն բնորոշվում է որպես ուրիշի անձի հանդեպ մտահոգություն արտահայտելու միջոց, որն օգնում է հասարակական շփումների ընթացքում անհրաժեշտ ներդաշնակությունը վերականգնելուն և պահպանելուն:

- Քաղաքավարությունը բնութագրող ռեսուրսների շարքում կան մի շարք գործողություններ, որոնք ուղղված են զրուցակցի լավ զգալուն (չպարտադրել, նրանց տարբերակներ թողնել, հարաբերությունները հեշտացնել...):

- Հետազոտության արդյունքներից չի ենթադրվում, որ քաղաքավարությունը ներողություն հայցելու գործընթացի բաղադրիչ տարր է, քանի որ որպես հասարակական երևույթ՝ քաղաքավարությունը ավելի ընդգրկուն է, քան ներողություն հայցելը: Քաղաքավարությունը, անշուշտ, բնորոշ է նաև մի

Օհանյան Հ.

շարք այլ խոսքային ակտերի, օրինակ՝ ողջույններին, հաճոյախոսություններին, շնորհավորանքներին, գոտեպնդման, երախտագիտական խոսքերին, խնդրանքին և այլն:

- Զրույցը քաղաքավարի կլինի, եթե բանախոսը չխախտի զրույցում սահմանված գործող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև միջմշակութային հաղորդակցման պահին չմոռանա սեփական լեզվի և լեզուն կրողի մշակութային առանձնահատկությունները:

- Ուսումնասիրելով բերված օրինակները երկու լեզուներով (իսպաներեն/հայերեն)՝ կարելի է ասել, որ խոսքային քաղաքավարությունը խոսքի գիտակցական կառավարման ոլորտին է վերաբերում: Հետևաբար քաղաքավարությունը հաղորդակցությունը կարգավորելու միտում ունի՝ օգտագործելով համապատասխան խոսքային միավորներ: Այնուամենայնիվ, չնայած քաղաքավարության իրադրություններին և դրանց արտահայտող խոսքային միավորներին՝ այլ են երկու լեզուներում առկա քերականական հարաբերությունները, որոնք այս հետազոտության ուսումնասիրության առարկան չեն:

- Խոսքային գործունեության ուսումնասիրության այս ոլորտը սերտորեն առնչվում է հաղորդակցությանը, նյարդալեզվաբանությանը և գործաբանությանը՝ մասնավորապես խոսքային ակտերի գործառությանը:

- Հաղորդակցության մեջ քաղաքավարության կանոնները կարող են կախված լինել ազգամշակութային բաղադրիչից և լեզվի մեջ՝ դրա համապատասխան դրսևորումներից (հատկապես խոսքային հաղորդակցության ժամանակ), որի մասին են խոսում բերված օրինակները: Կան հաղորդակցական դրույթներ, որոնք կարելի է ասել՝ նույն են անկախ մշակույթից, սակայն տարբեր են դրանց դրսևորումներ լեզվում:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Նազարյան Ա. 2001, Գործարար հաղորդակցություն, Երևան, «Զանգակ-97», 256 էջ:

Բաղդասարյան Հ. 2023, Համընդհանուրի, ազգայինի և անհատականի հակադրամիասնությունը որպես թարգմանական խնդիր, Երևան, «ԵՊՀ» հրատ., 365 էջ:

Стернин И. 1996, Русский речевой этикет. Воронеж, «Воронежский областной Институт повышения квалификации и переподготовки работников образования», 123 с.

Формановская Н. 1989, Речевой этикет и культура общения, Москва, «Икар», 156 с.

Arroyo, Josée, L.B. 2004, Sociolingüística del español, Desarrollos y perspectivas en el estudio de la lengua española en cotexto social, Madrid, Ed.Cátedra,S.A., pp 759.

Coseriu E. 1999, Lecciones de la lingüística general, Madrid, Ed. Gredos, pp.355.

Escandell M.V. Vidal 2008, Introducción a la pragmática, Barcelona, Ed. Ariel, 265pp.

Bekaryan L., Paronyan Sh. 2001, The Actualization of Prescriptions in Directive Communicative Situations // «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, No 5, Երևան, էջ 106–116:

Grice H.P., 1975, Logic and Conversation, In: Syntax and Semantics, Vol. 3, Speech Acts, ed. by Peter Cole and Jerry L. Morgan. New York: Academic Press 1975, 41–58; here 41–58.

Lakoff R.T. 1973, The Logic of Politeness or Minding Your P's and Q's // Papers from the 9th Regional Meeting, (eds. C. Colum et al.). Chicago: Chicago Linguistic Society, pp. 292–305:

Leech G. 1983, Principles of Pragmatics. New York: Ed. Longman, pp. 250:

Santos G.V.D. 2012, Fundamentos de la comunicación, 1^a ed., Red de Milenio S.C., pp. 158.

РЯД ПРОЯВЛЕНИЙ ВЕЖЛИВОСТИ В УСТНОЙ РЕЧИ КАК КОМПОНЕНТ КОММУНИКАЦИИ

РИПСИМЕ ОГАНЯН

Резюме

Вежливость является одним из проявлений социального поведения людей. В прагматической лингвистике и, в частности, в общем языкознании существуют вопросы, связанные с этикетными нормами речевого процесса. Язык отражает правила вежливости, коммуникативные модели и стратегии, способствующие гармоничному и эффективному коммуникативному взаимодействию. Понятие вежливости у каждого народа проявляется по-своему, так как вежливость является не только нормой этикета, но и одним из основных компонентов в культуре каждого народа. В данной статье, наряду с рядом особенностей понятия вежливости, обсуждаются также особенности коммуникации в межкультурных отношениях на примерах испанского и армянского языков. Культура как отдельное понятие исследует металингвистику в качестве особого подхода к проблеме межкультурной коммуникации, на основе которой выстраивается вся система культуры.

Коммуникация – это любой вид общения между людьми. В лингвистическом понимании она подразумевает общение как вербальное, так и невербальное. В другом понимании коммуникация – это система информа-

ционного обмена внутри того или иного общества или культуры. Основными факторами коммуникации являются индивидуальность, различные отношения, национальная принадлежность и др. Все формы вежливости включают в себя нормы этикета, которые в свою очередь являются основными элементами коммуникации, и их отсутствие может спровоцировать межкультурный конфликт. Следует отметить, что большую роль в этом играет ряд социальных вопросов: язык, нация, национальные языки как историческая категория, взаимосвязи между языковыми и социальными структурами, а также возраст, пол, определённый уровень образования, социальный статус и контекст. Лингвистика является одним из основных инструментов, который направлен на смягчение коммуникативных конфликтов, возникающих при несоблюдении коммуникативных норм. Из вышесказанного следует, что формы вежливости являются важнейшими компонентами в коммуникации.

Ключевые слова: *вежливость, коммуникация, язык, межкультурная коммуникация, формы вежливости, социолингвистика, прагматика.*

SOME DEMONSTRATIONS OF POLITENESS IN ORAL SPEECH AS A COMPONENT OF COMMUNICATION

HRIPSIME OHANYAN

Summary

Politeness is one of the demonstrations of people's social behavior. Pragmatic communication is the use of a set of sociolinguistic rules related to language within a communicative context; that is, pragmatics is the way language is used to communicate rather than the way language is structured. The way you act when you are respectful, thoughtful, and kind towards others is politeness. Politeness makes you say "Thank you!" when someone hands you the pen you dropped. So, being polite means behaving in a way that is socially correct and shows understanding of other people's feelings.

Courtesy is expressed differently in every nation, as it is not only a norm of etiquette, but also one of the main components of every nation's culture. This

Քաղաքավարության որոշ դրսևորումները բանավոր խոսքում...

article reveals some features of the concept of politeness, it also analyzes the features of communication in cross-cultural relations using examples of the Spanish and Armenian languages.

Culture, as a separate concept, explores metalinguistics as a special approach to the problem of cross-cultural communication, based on which the entire cultural system is built, in which the main element for its construction is not a sentence, but an utterance. In linguistics, it implies communication both verbal and non-verbal. In another understanding, communication is a system of information exchange within a particular society or culture. The main factors of communication are individuality, various relationships, nationality, etc. All forms of politeness include etiquette norms, which in turn are the main elements of communication and their absence can provoke cross-cultural conflict. It should be noted that a number of social issues play an important role in this: language, nation, national languages as a historical category, the relationship between linguistic and social structures, as well as age, gender, level of education, social status and context. In the social study of language, linguistic politeness has played a central role. It is also part of sociolinguistics and pragmatics. Each country has a variety of cultures and language accuracy in communication. Language is one of the main tools aimed at mitigating communication conflicts that arise when communication norms are not observed. From the above, it follows that forms of politeness are the most important components of communication.

Keywords: politeness, communication, language, intercultural communication, forms of politeness, sociolinguistics, pragmatics